

ԱՄԵՐԻԿԱՅԱՅ ԿԵԱՆՔ
Համապգային-Նիւ Եորք

Փօլ Գալինեանի Կողմից Պատարաստուած Եւ Վիլիամ Սարոյեանի
Կեանքին Ու Գործին Նուիրուած Ժապաւէնի Յուցադրութիւն

Գրեց՝ Գրիգոր Գրիգորեան

Նախաձեռնութեամբ Նիւ Եորքի Համապգայինի գրական յանձնախումբի, Կիրակի Փետրուար 9ին, Նիւ Եորքի Բէյսայդ թաղամասի, Բենիամին-Քարդուօ միջնակարգ դպրոցի սրահում եւ շուրջ 300 հոգի հանդիսականների ներկայութեամբ, յուցադրուեցաւ Փօլ Գալինեանի պատրաստած Վիլիամ Սարոյեանի կեանքն ու գործը ներկայացնող հետաքրքրական ժապաւէնը:

Յայտագրի բացումը կատարեց շրջանիս ծանօթ մտաւորական ընկ. Դոկտ. Արա Գաբրիէլեանը: Նա ծանօթացրեց օրուան քանախօս, գրական քննադատ փրոֆ. Վարդգէս Կինոյեանին:

Փրոֆ. Կինոյեանը վերլուծական մօտեցումներով անգլերէն լեզուով արժեւորեց Վիլիամ Սարոյեանի գործերը, որպէս ամերիկացի-հայ գրող, թատերագիր, որի գրական թեման առաւելաբար ապրուած է հայ ժողովրդի հոգեւոր մշակոյթից, աւանդութիւններից եւ պատմութիւններից:

Սարոյեանը իր մանկութիւնն ու պատանեկութիւնը անց է կացրել հայկական միջավայրում քնականաբար իր աշխատութիւնների մէջ ենթագիտակցականօրէն խօսում է հայկականութիւնը:

Սարոյեանը յատկապէս նորավեպի քնազաւառում, ստեղծել է բարոյական ընթերցումներով հարուստ տիպարներ եւ պատկերներ:

Նա ընթերցողի հետ խօսում է հասկնալի լեզուով: Պարզ անհատի կեանքից վերցուած սովորական պատկերներին ընդհանրական քնոյթ տալով, հասցնում է գեղարուեստական գեղեցկագոյն բարձրութիւնների:

Սարոյեանի գործերը ճանաչուել են ամբողջ աշխարհում եւ թարգմանուել բազմաթիւ լեզուներով:

Տեղին է նշել, որ Վարդգէս Կինոյեանը ամերիկեան չափանիշով գրական քննադատ է, եւ իր բազմաթիւ գործերի շարքին իր գրչին է պատկանում նաեւ ամերիկացի յայտնի վիպասան-ռճարան Հենրի Ջէյմսի (1843-1916), «Daisy Miller» գործերի, քննադատական մեկնաբանութիւնը:

Վարդգէս Կինոյեանի խօսքից յետոյ, քեմ հրաւիրուեցին պարմանուիիներ Պարիկ Նալբանդեան, Երազ Մարգարեան, Յուշեր Պատիկեան, եւ Լանա Գալանճեան, որոնք անգլերէն եւ հայերէն լեզուներով, գեղեցիկ առոգանութեամբ եւ քեմական համարձակ ելոյթով, արտասանեցին Սարոյեանի գործերից մի շարք ընտրովի կտորներ, որոնց շարքին նաեւ նրա հանրածանօթ մտածումը, հայ ժողովրդի կամքի եւ անընկճելի հոգեկան տոկունութեան մասին:

«I should like to see any power of the world destroy this race, this small tribe of unimportant people. Go ahead, destroy Armenia, see if you can do it ...»

Արտասանութեան եւ ասմունքի վերոյիշեալ գեղեցիկ ցուցադրութիւնը դասաւորել եւ քննականացրել էր ծանօթ քննադրիչ-դերասան դոկտ. Հրանդ Մարգարեանը:

Դոկտ. Գաբրիէլեանը, քնն հրաւիրեց պրն. Փօլ Գալինեանին, որ հանգամանօրէն քացատրութիւններ տուաւ իր պատրաստած շարժանկարի մասին:

Նա յիշեց եւ այն իրողութիւնը, որ Սարոյեանի անդրանիկ աշխատութիւնը՝ «The Daring Young Man On The Flying Trapeze», 1934 թուին լոյս է ընծայել «Հայրենիք»ում (Պոսթըն): Որով Սարոյեանը յայտնի է դարձել եւ ծանօթացուել է հանրութեան «Հայրենիք»ի միջոցով:

Սարոյեանը առաջին գրողն է, որի անունով Մմերիկան եւ Խ. Միութիւնը միասնաբար յիշատակի նամակադրոշմներ են հրատարակել:

Նա Մմերիկան սիրում էր, քայց իր մայր երկիրը, Հայաստանը չմոռացաւ:

Սարոյեանը մահացաւ Ֆրէյնոյում, 1981 թուի Մայիս 18ին, 72 տարեկան հասակում եւ իր աճիւնի կէսը փոխադրուեց Երեւան եւ ամփոփուեց Երեւանի մեծերի պանտէօնում:

Փաստագրական կարգով պատրաստուած ժապաւէնը ներկայացնում է Սարոյեանի կեանքը, իր մանկութեան օրերից մինչեւ իր հասուն տարիքը: Սարոյեանի ընտանիքը, հայրենական տարապնէրով: Ֆրէյնոն խաղողի իր անձայրածիր այգիներով:

Հետաքրքրական էին եւ հաճելի, Սարոյեանի հայերէնով ելոյթներն ու վրոյցները, եւ քաղմաթիւ ուրիշ հետաքրքրական պատկերներ:

Բնւ հրաւիրուեց Համալգայինի Արեւելեան Մմերիկայի Օրջանային Վարչութեան ատենապետ ընկ. Չարլի Միքիթարեանը, որ դրուատանքի խօսքերով արժեւորեց պրն. Փօլ Գալինեանի աշխատանքը, միաժամանակ նշեց, որ սոյն ժապաւէնը ցուցադրուել է Համալգայինի Արեւելեան շրջանի բոլոր միաւորների կողմից:

Ընկ. Չարլի Միքիթարեանը Օրջանային Վարչութեան անունից, պրն. Գալինեանին պարգեւատրեց Համալգայինի մշակութային ոսկէ շքանշանով:

Վաճառքի էր դրուած Սարոյեանի գործերից օրինակներ, նամակադրոշմներ եւ վանապան աշխատասիրութիւններ՝ նուիրուած իրեն:

Մեկի յաջողութիւն ենք ցանկանում Համալգայինի վարչութեան եւ գրական յանձնախումբին:

